

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրված հրդեհների և դրանց հետևանքների

2015թ.-ի ընթացքում ՀՀ ՏԿԱԻՆ ՊՀ և ՏԱՏ-ում հաշվառվել է 2562 հրդեհ՝ 1 212 366 293 դրամի նյութական վնասով, զոհվել է 32 և վնասվածքներ ստացել՝ 40 մարդ: 2014թ.-ին հաշվառվել էր 1816 հրդեհ՝ 813 139 896 դրամի նյութական վնասով, զոհվել էին 29 և վնասվածքներ ստացել՝ 57 մարդ: Այսպիսով, 2014թ.-ի համեմատ 2015թ.-ին հրդեհների քանակն աճել է 746 դեպքով (41.08%), զոհերի թիվը 3-ով (10.34%), նյութական վնասի գումարը՝ 399 226 397 դրամով (49.09%), իսկ վնասվածք ստացածների քանակը նվազել է 17-ով (29.82%):

Հրդեհների քանակը նվազել է միայն Գեղարքունիքի մարզում, իսկ աճել՝ Երևան քաղաքում և մնացած բոլոր մարզերում: Հրդեհների քանակի աճը հիմնականում պայմանավորված է չոր խոտածածկով բաց տարածքներում առաջացած հրդեհներով: Արձանագրվել է նմանօրինակ 1246 հրդեհ՝ 603-ով (կամ 93.78%) ավելի, քան նախորդ տարի: Հրդեհների 48.63%-ը տեղի է ունեցել բաց և խոտածածկ տարածքներում, 29.47%-ը՝ բնակելի հատվածում, 6.2%-ը՝ ավտոմեքենաներում, 3.63%-ը՝ գյուղատնտեսական նշանակության օբյեկտներում, 1.8%-ը՝ առևտրի, հանրային սննդի ու սպասարկման օբյեկտներում, իսկ 10.27%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 61.51%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 15.3%, երեխաների խաղալը կրակի հետ՝ 7.65%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 2.61%, հրկիզումները՝ 0.82%:

Հրդեհների 54.25%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 45.75%-ը՝ գյուղական բնակավայրերում: Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 96-ը խոշոր են (նախորդ տարի՝ 65), որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է 920 993 409 դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 75.96%-ն է: Առավել խոշոր հրդեհներից են՝

1. 10 հունիսի, Կոտայքի մարզ, գյուղ Բալահովիտ, <<Սարանիստ>> ՍՊԸ արտադրամաս: Նյութական վնասը՝ 133 960 410 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ տեխնոլոգիական գործընթացի խախտում:

2. 1 հոկտեմբերի, ք.Երևան, Բաբաջանյան 15/1, <<Հատուկ Սանտեխմոնտաժ>> ՓԲԸ արտադրամաս: Նյութական վնասը՝ 77 770 325 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրատեխնիկական:

3. 15 հոկտեմբերի, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Խաչատրյան 3, <<Երկու եռյակ>> ՍՊԸ պահեստ: Նյութական վնասը՝ 67 406 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

4. 16 ապրիլի, Տավուշի մարզ, գ.Նորաշեն, առևտրի սրահ: Նյութական վնասը՝ 39 480 466 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ հրկիզում:

5. 7 հոկտեմբերի, Լոռու մարզ, Մղարթ-Օձուն ավտոճանապարհին, <<MANTGA>> բեռնատար մեքենա: Նյութական վնասը՝ 38948515 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ շարժիչի գործարանային անսարքություն:

6. 2 հունվարի, Տավուշի մարզ, գ.Աչաջուր, բնակելի տներ: Նյութական վնասը՝ 23 305 200 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

7. 30 նոյեմբերի, Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Զ.Անդրանիկի պողոտա 88, <<Հրազդան Տրանս Սերվիս>> ՍՊԸ ավտովերանորոգման կետ: Նյութական վնասը՝ 20 700 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ վառարանի շահագործման կանոնների խախտում:

8. 10 օգոստոսի, Արարատի մարզ, գյուղ Նորամարգ, տնամերձ տարածքում՝ դեզ: Նյութական վնասը՝ 20 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ արևի ճառագայթների ֆոկուսացում (օպտիկական երևույթ):

9. 20 օգոստոսի, Շիրակի մարզ, ք.Գյումրի, Ղարիբջանյան խճ. <<Տրանս-ակնթարթ>> ՍՊԸ անգար: Նյութական վնասը՝ 19 030 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

10.4 դեկտեմբերի, ք.Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված, Մինսկի 1/5, տնտեսական ապրանքների խանութ: Նյութական վնասը՝ 18 500 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

2015թ.-ի ընթացքում թվով 22 հրդեհներում զոհվել է 32 քաղաքացի, իսկ 2014թ.-ին՝ թվով 29 հրդեհներում զոհվել է 29 քաղաքացի: Զոհերով հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, անզգուշությունը ծխելուց, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, գազի արտահոսքը, ճանապարհատրանսպորտային պատահարը, ինքնահրկիզումը: Զոհերից 17-ը արձանագրվել է բնակելի հատվածում, 11-ը՝ ավտոմեքենաներում, 2-ը՝ ծերանոցում, մեկական՝ ԱԳԼՃԿ-ում և ԲԼԿ-ում: Զոհերն (որոնցից 9-ը տարեցներ են) արձանագրվել են հետևյալ տարածաշրջաններում. ք.Երևան՝ 8, Լոռի՝ 7, Շիրակ, Արարատ, Սյունիք, Կոտայք՝ 3-ական, Արագածոտն՝ 2, Արմավիր, Գեղարքունիք, Վայոց ձոր՝ մեկական:

2015թ.-ի ընթացքում վնասվածքներ են ստացել քաղաքացիներ՝ 17-ով (կամ 29.82%) պակաս, քան նախորդ տարի: Թվով 19 մարդ վնասվածքներ է ստացել բնակելի հատվածում, ևս 11-ը՝ ավտոմեքենաներում, բաց տարածքում՝ 3, ԱԳԼՃԿ-ում, ՀԳԼԿ-ում և ԲԼԿ-ում՝ 2-ական, ավտովերանորոգման կետում՝ 1: Վնասվածքները գրանցվել են ք.Երևանում՝ 10, Լոռիում՝ 8, Սյունիքում՝ 6, Կոտայքում՝ 5, Արմավիրում՝ 4, Գեղարքունիքում, Վայոց ձորում և Արագածոտնում՝ 2-ական, Շիրակում՝ 1:

Դատաքննչական մարմիններ է ուղարկվել 180 հրդեհի նյութ, որոնցով քրեական գործեր են հարուցվել 49 դեպքում: Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու մասին 886 որոշումներ, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանի դատախազությունների կողմից:

Կատարվել է 2015թ. ընթացքում հանրապետությունում արձանագրված հրդեհների հաշվառում, վերլուծություն և վիճակագրական տվյալները լուսաբանվել են գրաֆիկներով ու աղյուսակներով: Կատարվել է հրշեջ նախապահպանական աշխատանքների վերաբերյալ մարզային ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկանքների և հաշվետվությունների ընդհանրացում: